

ԿՈՉ ՄԵՐ ՀԱՄԱԿԻՐՆԵՐՈՒՆ ԵՒ ԲՈԼՈՐ ԱԶԳԱԿԻՑՆԵՐՈՒՆ

Posted on June 10, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



Վիզէն Տարագճեան, Մոնթրէալ, 5 Յունիս 2022

Սիրելի՛ հայրենակիցներ,

Շատ հաւանաբար տեղեակ էք ոչ-շահուրաբեր ԱԶԳԱՅԻՆ ԼԵԳԵՈՆ հասարակական կազմակերպութեան գործունեութեան: Ան յանձնառու է պատրաստելու կամաւորներէ կազմուած հզօր աշխարհագօր մը՝ իբրեւ օժանդակ գունդ մը ՀՀ-ի բանակին: ԱԶԳԱՅԻՆ ԼԵԳԵՈՆը յանձնառու դարձած է կոփել հայրենի երկսեռ պատանիներուն եւ երիտասարդներուն միտքն ու հոգին՝ զանազան մարզումներով ու վարժանքներով, որոնց կ'ուղեկցի բարոյահոգեբանական ու հայրենասիրական դաստիարակութիւնը:

Աշխարհի եւ տարածաշրջանի ռազմական ու քաղաքական կացութիւնը մեզ կը պարտադրէ պատրաստ գտնուիլ ամէն հաւանականութեանց դիմաց, ինչպէս նաեւ յետադարձ հայեացք նետել մեր պատմութեան փորձառութեան վրայ, որ մեզի կը սորվեցնէ չվստահիլ որեւէ դաշնակիցի կամ պայմանագիրի, այլ ապաւինիլ միայն սեփական ուժերուն, յատկապէս՝ մեր տղոց եւ աղջիկներու ինքնագոհաբերական կամքին, ունենալ հզօր բանակ եւ որպէս անոր նեցուկ՝ հազարաւորներէ բաղկացած աշխարհագօր մը:

Հայ-թրքական պատերազմը կը շարունակուի ու դեռ շատ երկար պիտի շարունակուի: Փորձը ցոյց տուաւ, որ մենք միայնակ մնացինք անտարբեր աշխարհի մը աչքերուն առջեւ: Հետեւաբար կարիքն ունինք լաւ մարզուած տասնեակ հազարաւոր կամաւորներու՝ մեր նախահայրերու սուրբ հողը անարգ թշնամիէն պաշտպանելու եւ մեր Հայրենիքի գրաւեալ տարածքները ազատագրելու համար: Անձնապէս ես միշտ պատրաստ եմ որեւէ պահու նորէն մտնելու խրամատները՝ իմ քաջ եղբայրներուս եւ քոյրերուս հետ: Ինչո՞ւ դուք եւս այս կամ այն ձեւով չունենաք ձեր մասնակցութիւնը այս կենսական գործին մէջ:

Նախորդ ամիսներուն, ԱԶԳԱՅԻՆ ԼԵԳԵՈՆԻ գործունեութեան շնորհիւ, այսօր արդէն 750 հոգինոց կամաւորական գունդ մը պատրաստ է պաշտպանելու մեր բոլորիս Հայրենիքը: Մենք պարտաւոր ենք շարունակել այս ուղիով ընթանալ, եւ ոչ մէկ բան պէտք է կասեցնէ մեր ընթացքը:

Շուտով՝ քանի մը շաբաթէն կը մեկնարկէ ԱԶԳԱՅԻՆ ԼԵԳԵՈՆԻ ամառնային ծրագիրը: Նախատեսուած են հնգօրեայ առնուազն 5 ճամբարներ (camping): Ծրագրին յաջող իրականացումը կը պահանջէ նախապատրաստական լուրջ աշխատանք, ինչպէս նաեւ սնունդի, փոխադրամիջոցներու, պիտոյքներու եւ կազմաձևերու զգալի քանակի պատշաճ ապահովում: Նախնական հաշուարկներով իւրաքանչիւր հնգօրեայ ճամբարի համար կը պահանջուի շուրջ 2000 ամերիկեան տոլար՝ ճամբարներուն նպատակը բարեյաջող կերպով իրականացնելու համար:



Սոյ

ն կոչով Ձեր ուշադրութեան կը յանձնեմ ԱԶԳԱՅԻՆ ԼԵԳԵՈՆԻ այս ծրագիրը՝ կոչ ընելով Ձեր գիտակցութեան՝ դառնալու անոր հովանաւորներէն մէկը: Ինչպէս նշեցի, իւրաքանչիւր հայու պարտաւորութիւնն է իր ունեցած հնարաւորութիւններով մասնակիցը դառնալ երկարատեւ պատրաստութիւն, մարզումներ եւ գիտելիքի ամբարում պահանջող այս հայրենասիրական գործունեութեան: Մենք այսօր իսկ պատրաստ պէտք է ըլլանք ամեն տեսակի անակնկալներու, այլապէս պատերազմական լայնածաւալ գործողութիւններու վերսկսման պարագային դարձեալ ուշ պիտի մնանք եւ կրնանք նոր աղետի ենթարկուիլ:

Սիրելի՛ հայրորդի,

Մասնակցի՛ր եւ օժանդակե՛՛ ԱԶԳԱՅԻՆ ԼԵԳԵՈՆԻ ամառնային ճամբարներու ծրագրի իրականացման ու յաջողութեան:

Աստուած պահապա՛ն հայ զինուորիին:

Յաւերժ փա՛ռք եւ պատի՛ւ Հայրենիքի պաշտպանութեան համար զոհուած մեր նահատակներուն:

Կեցցե՛՛ մեր յաւերժական Հայրենիքը:

There are no comments yet.